ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. հունվարի 31 **թիվ 11-Ա**

ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 226-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2012 թվականի հունվարի 24-ի զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640-Ն հրամանով հաստատված << Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգի>> 20-րդ կետի պահանջը խախտելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրեն Գրիշա Գևորգյանին հայտարարել խիստ նկատողություն:

ՍԱՀԱԿՅԱՆ